



ՄԵՐ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ

Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում մասնագիտությամբ սովորող ուսանողները իրենց արտադրական և նախաավարտական պրակտիկաններն անց են կացնում «ՉՊՄԿ» ՓԲԸ, «ԱՊՄԿ» ՓԲԸ-ի բացահանքերում և «ԿԼՅԿ» ՓԲԸ ստորգետնյա հանքում:



- 📍 ՀՀ, 3307, Սյունիքի մարզ, Կապան, Բաղաբերդ 28
- ☎ +374 (285) 5 46 80
- 📞 +374 (285) 5 46 80
- ✉ kapan@polytechnic.am
- 🌐 www.haphkapan.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՊԱԳԱԳԻՏԱԿԱՆ ԷԼԵՄԵՆՏ



ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՐԾ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ



«ԱՊԱԳԱ
ԵՆԱՍԱՐԱԳԵՏ»
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԼԵՄԵՆՏ



Լեռնային գործը մարդկային գործունեության ոլորտ է՝ կապված երկրի ընդերքի յուրացման և օգտագործման հետ: Այն ներառում է երկրի

կեղևի վրա տեխնածին ազդեցության բոլոր տեսակները՝ գլխավորապես օգտակար հանածոների կորզումը, դրանց առաջնային վերամշակումը և լեռնային արտադրության տեխնոլոգիաների հետ կապված գիտական հետազոտությունները: Լեռնային գործը իրենից ներկայացնում է հասարակական արտադրության կարևորագույն ճյուղերից մեկը, որտեղ զբաղված են միլիոնավոր մարդիկ: Լեռնային գործի արտադրանքը՝ արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության և շինարարության անփոխարինելի հանքային հումքն է, որով որոշվում է համաշխարհային էկոնոմիկայում լեռնային գործի նշանակությունը: «Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում» կրթական ծրագրի շրջանակներում իրականացվում է երկու ընտրություններով ուսուցում.

- Օգտակար հանածոների հանքավայրերի ստորգետնյա մշակում,
- Բաց հանքային աշխատանքներ:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՄՇԱԿՈՒՄ

Օգտակար հանածոների հանքավայրերի ստորգետնյա մշակումը լեռնային արտադրության և գիտության ոլորտ է՝ մարդկային գործունեության տարբեր ասպարեզներում օգտագործման համար ընդերքից օգտակար հանածոյի կորզման դեպքում մեթոդների, եղանակների և միջոցների իրացման հետ կապված: Մասնագիտական գործունեության օբյեկտներն են ստորգետնյա հանքերը, հորատանցքային տեխնոլոգիայով հանքաքարի արդյունահանման լեռնային ձեռնարկությունները:

ԲԱՑ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բաց հանքային աշխատանքները լեռնային արտադրության և գիտության ոլորտ է, որն իր մեջ ներառում է հանքարդյունաբերական ձեռնարկությունների, խրամների, փոսորակների և տարբեր ֆունկցիոնալ նշանակության այլ օբյեկտների նախագծման, շինարարության, շահագործման և վերակառուցման գծով մարդկային գործունեության մեթոդների, եղանակների և միջոցների համալիր: Մասնագիտական գործունեության օբյեկտներն են հանքաքարային և շինարարական նյութերի բացահանքերը, քարածխի կտրվածքները, ցրոնային և տեխնածին հանքավայրերի մշակման հանքարդյունաբերական ձեռնարկությունները:



ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՇԽԱՏԵԼ

Շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել որպես հորատման գծով ճարտարագետ, բացահանքի տեղամասի պետ, լեռնային վարպետ, հանքահարստացուցիչ և հանքարդյունաբերական կոմբինատների ճարտարագետներ, ինչպես նաև նրանք կարող են աշխատել շինարարական ընկերություններում, հետազոտական և նախագծային ինստիտուտներում, զինվորական կազմակերպություններում, համապատասխան պետական կառավարման համակարգում և այլն:

